

ԱՄԳՂԻԱԿԱՆ « ԹԱՅՄՁ » ԼՐԱԳԻՐՆ

ՄԱՆՅԹ է հանրութեան Անգղիոյ մայրաքաղաքին մէջ հրատարակուած սոյն անուամբ լրագիրս, եթէ ոչ ի տեսոյ գէթ ի լրոյ, սակայն բազմաց շունենալով ստոյգ գաղափար մը լրագրին որպիսութեան վրայ, կը գնենք հոս մանրամասն նկարագիր մը, զոր հետաքրքիր և մանրագնին գիտող մը համբերութեամբ նշանակեր է:

Ոչ միայն սարսափ մը և յուսահատութիւն մը կը զգանք, կ'ըսէ, ձեռքերնիս առնելով այս ամէնօրեայ հանրագիտական թերթը, յորում կը գտնուի ինչ որ կը կատարուի, կը մտածուի և կը խօսուի բոլոր աշխարհիս մէջ, այլ նաև աչքն իսկ կը շուարի կը մնայ, կորսուելով մանր՝ բայց մաքուր տպագրեալ բառերու սկզիտանու մէջ. խիտ խիտ շարուած առանց միջոցի և առանց անջրպետի, որք կարծես ընթերցողին համբերութիւնը փորձելու համար եղած են:

Առնունք ձեռքեռնիս թայմի որ և իցէ թիւ մը, որոյ լայնութիւնն է 0^o.42 և բարձրութիւնն 0^o.62, և կը բաղկանայ ութ թածալ թերթէ մը 16 երեսով, իւրաքանչիւր երես ունի 6 սիւն, որով բովանդակ թերթը կ'ունենայ 96 սիւն, և կ'արժէ ամբողջ թերթը 30 հարիւրորդ (սանդիմ), Մինչդեռ Temps գաղղիական լրագիրը որ կը բովանդակէ 24 սիւն միայն կ'արժէ 15 հարիւրորդ: Սեանց բարձրութիւնն է 0^o.56, որով եթէ թայմի ամէն սիւները վրայէ վրայ գնենք, կ'ունենանք 53^o.76 երկայնութեամբ տպուած թղթոյ շերտ մը: Իւրաքանչիւր երես միջին հաշուով կը բովանդակէ 13, 700 բառ, իսկ ամբողջ թերթն 220, 000. Այս 220, 000 բառերը գնելով քովէ քով առանց միջոցի և առանց կիտադրութեան 1130^o երկայնութիւն կ'ունենան: Գիտելի է որ այն ամէն համառօտութիւնները, որոնք անգլիական լրագրաց մէջ խիստ շատ են, մասնաւորապէս ծանուցմանց մէջ, իւրաքանչիւրը մի մի բառ համարուած են, ինչպէս օրինակ Wm. (William) Ib. (pound): Նմանապէս թիւերը մի մի բառ համարուած են, զոր օրինակ 18 d. որ կը նշանակէ 18 pence, հաշուած է երկու բառ. թայմի մէջ այս համառօտեալ բառերս են միջին հաշուով 9^o/₁₀:

Թուած են նաև նոյն իսկ գիրքերը որ կը գտնուին իւրաքանչիւր երեսին մէջ, որք են իբր 52, 375 առ մի էջ. իսկ բովանդակ թերթին մէջ 840, 000, իսկ կիրադրական նշանները ինչպէս են երեք կէտերը, շեշտերը, գծիկները, փակագիծերը և այլն՝ են 50, 000:

Temps լրագրին էջի մը մէջ բովանդակուած բառերու գումարը հազիւ երեք կ'անցնի 10, 000, մանաւանդ առաջի երեսին մէջ ուր 7000—8000 բառէ աւելի ոչ երբէք կը գտնուի, որոց գումարը 4 երեսին միանգամայն կ'ընէ 40, 000 բառ: Հետևաբար Թայմզը 5¹/₂ անգամ աւելի նիւթ կը պարունակէ քան զTemps:

ԳԻՇԵՐԱՀԱՒԱՍԱՐ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ 1893 ԱՄԻՆ.

Աստղաբաշխական գարունը կը սկսի մարտ ամսուն մէջ, այսինքն թէ երկրիս Հասարակածը այս ամսեան մէջ շեշտակի արեգական կեդրոնին վրայէն կ'անցնի: Այս անցքը պիտի հանդիպի ըստ Նոր Տումարին մարտի 20ին երկուշաբթի օր. ուստի ըստ ինքեան մարտի 20ին պէտք էր գիշեր ու ցորեկ հաւասար լինէին, որ է՝ իւրաքանչիւրը 12 ժամ լինէին. բայց իսկապէս այնպէս չի լինիր, որովհետև մեր երկիրը շրջապատող օդը բեկանելով արեգական ճառագայթները, կը ցուցնէ մեզ զայն յառաջ քան զհորիզոնէն վեր ելլելն: Թէ որ փնտռենք աստղաբաշխական տարեգրոց մէջ՝ կը գտնենք որ մարտի 20ին տիւր կ'առաւելու քան զգիշեր 10 վայրկեանէն աւելի. նոյնպէս նաև 19ին դարձեալ տիւր 2 վայրկեան աւելի երկայն է քան զգիշեր. ուստի պէտք է յառաջել 18ին, յորում գիշերը կ'երկըննայ քան զտիւ գրեթէ 4 վայրկեան: Հետևաբար գիշերահաւասարը կը կատարուի մարտի 19ին մերձաւորապէս, իսկ այն երկիրները որ Պարիսու միջօրեականէն 6 ժամ կը կանխեն, ինչպէս է Թոնքին, անոնց գեշերահաւասարը կատարեալ կը լինի: Գարնանային գիշերահաւասարէն վերջը տիւր աւելի երազաբար կը յառաջէ քան յառաջն, այնպէս որ եթէ մարտ 9ին գիշերը քան զցերեկը աւելի երկայն է 1⁴.10', նոյն ամսոյն 29ին ցերեկը քան զգիշեր կ'առաւելու 1⁴.14'. Որով տասը օրուան ընթացից մէջ տիւր յառաջեց քան զգիշերը 4 վայրկեան: